ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2026թ. թիվ 636-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ԹԻՎ 555-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետով, հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Պետական ուսումնական հաստատության» կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 5-րդ կետի 4)-րդ ենթակետը և 11-րդ կետը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի նախագահի 17.08.2026թ. գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2024 թվականի օգոստոսի 15-ի «ՀՀ Լոռու մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների միասնական խորհուրդների կազմերը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի թիվ 231-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 555-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

«7.6. ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ» մասում «Խաչատրյան Հասմիկ» բառերը փոխարինել «Հովհաննիսյան Սպարտակ» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-08-18 15:49:30 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. օգոստոսի 18
ք.Վանաձոր